№ 141 ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9 1889 ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9 № 141

ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբլի։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԱՌԱՋԻԿԱՑ 1890 ԹԻԱԿԱՆԻՆ

„ՄՇԱԿ"

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 բուբլի է, վեց ամսվանը 6 բուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնակայա և Բաղարնայա փողոցների անկիւնում, Թամամչեվի տանը)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հեռևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

НОВОЕ ОБОЗРѢНІЕ

ВЪ 1890 ГОДУ

(СЕДЬМОЙ ГОДЪ ИЗДАНІЯ)

будетъ выходить въ Тифлисѣ, какъ и въ прошлые годы, ежедневно, по программѣ газеты литературной, общественной и политической.

Съ 12-го ноября 1887 г. «Новое Обозрѣніе» выходитъ двумя изданіями, изъ которыхъ *первое*, вечернее, предназначено для восточнаго Закавказья и сдается на вечерній поѣздъ желѣзной дороги, а *второе* утреннее,—для гор. Тифлиса, западнаго Закавказья и Россіи.

Условія подписки, съ пересылкою и доставкою: на годъ 10 р., на полгода—6 р., на три мѣсяца—3 р. 50 к., на одинъ мѣсяцъ—1 р. 50 к. За границу: на годъ—17 р., на полгода—9 р. 50 к., на три мѣсяца—5 р. (Подписка принимается не иначе, какъ считая съ 1-го числа любого мѣсяца).

За объявленія, изъ губерній и областей кавказскаго края взимается по 8 к. за строку петита на 4-й страницѣ и по 15 к. за такую-же строку на 1-й стр. За всѣ остальныя объявленія—по 10 к, за стр. петита на 4 стр. и по 15 к. за такую-же строку на 1 стр.

Объявленія изъ внѣ-кавказскихъ городовъ принимаются исключительно въ «Центральной конторѣ объявленій», бывш. Л. Метцль, въ Москвѣ, на Мясницкой улицѣ, въ д. Спиридонова.

Подписка и объявленія принимаются:

а) ВЪ ТИФЛИСѢ: въ конторѣ газеты, Головинскій проспектъ, домъ Читахова, № 12.

б) ВЪ ОТДѢЛЕНІЯХЪ КОНТОРЫ:

1) ВЪ БАКУ—при аптекарскомъ магазинѣ И. Г. Чубинова, на Михайловской улицѣ домъ Мирза-Авакова и Карабегова.

2) ВЪ КУТАИСѢ—при книжномъ магазинѣ братьевъ Чиладзе, противъ бульвара, въ домѣ Г. Андроникова.

3) ВЪ БАТУМѢ—при конторѣ М. С. Бетанова, Набережная, домъ Ферадъ-Бега.

в) У АГЕНТОВЪ КОНТОРЫ:

1) ВЪ Г. ШУШѢ—С. О. Ананьева, на площади Топханэ.

2) ВЪ Г. ГОРИ—Ир. И. Рамишвили.

3) ВЪ ЕЛИСАВЕТПОЛѢ—Г. А. Альтгаузена, при торговлѣ аптекарскими товарами.

Въ отдѣленіяхъ и у агентовъ подписка и объявленія принимаются по редакціоннымъ цѣнамъ, безъ всякой надбавки. Розничная продажа тоже производится безъ увеличенія платы, по 5 коп. за номеръ.

Иногородные адресуютъ свои требованія: **Въ Тифлисъ, въ редакцію «Новаго Обозрѣнія».**

Издательница О. А. Николадзе. Редакторъ М. А. Успенскій.

3—3.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մամուլի ազատութիւնը Ֆրանսիայում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կաթնատնտեսական դպրոցներ. Տխուր երևոյթ. Հայոց բարեգործական ընկերութեան Բաթումի ճիւղը. Նամակ Թէլաւից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ընդհանուր վիճակագրի հարցը. Թիւրքիա. Արտաքին լուրեր.—ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՄԱՄՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

—

Վերջին ժամանակները, մանաւանդ Բուլանժեան ագիտացիայի ժամանակ, ինչպէս և մենք յիշեցինք Պարիզի մասին գրած մեր տպաւորութիւնների մէջ, Ֆրանսիական մամուլը սկսեց ի չար գործածել տրպադրական խօսքի ազատութիւնը։ Հակառակ կուսակցութեան ներկայացուցչին վերնասելու համար մի յայտնի տեսակի մամուլը չէ խորշում ամբաստանութեան, բամբասանքի, ստախօսութեան և այլ այդ տեսակ միջոցներին դիմելու. դիպչել անձնական կեանքին, նկարագրել մութ գոյներով մարդու անցեալը՝ նրա յարգը հասարակութեան աչքում վայր գցելու համար,—դա սովորական երևոյթ էր դարձել Պարիզի մամուլի էջերի մէջ....

Մամուլը այդ տեսակ սանձարձակ վիճակին հասնելով՝ ֆրանսիական գործողներից, յատկապէս պատգամաւորների ժողովի անդամներից ոմանք՝ այն եզրակացութեան հասան, որ աւելի գործնական և աւելի խելացի կը լինէր, նոր օրէնսդրութեամբ, փոքր ինչ սանձահարել, սահմանափակել մամուլի ազատութիւնը Ֆրանսիայում, քանի որ մամուլը այս վերջին ժամանակներս սկսել է ի չար գործածել իրան տուած անսահման ազատութիւնը։ Մի խումբ պատգամաւորների գլխաւորութիւն յայտնեցին այդ ուղղութեամբ մի առաջարկ անել պատգամաւորների ժողովին։ Այդ լուրը ահազին աղմուկ գցեց ամբողջ Պարիզում և մամուլի ազատութեան, կամ այդ ազատութիւնը սահմանափակելու հարցը՝ մի քանի ամիս շարունակ քննադատութեան առարկայ դարձաւ Պարիզի մամուլի էջերում և Ֆրանսիական ամբողջ դրականութեան մէջ։

Ֆրանսիայի ամենալաւ, ամենայարգված մտածողները, մաքերի ընդհանուր հոսանքին հետևելով, կամայ-ակամայ իրանք էլ սկսեցին մտքեր արտայայտել մամուլի անսահման ազատութեան օգտաւէտութեան կամ վնասակարութեան մասին։

Այդ կողմից հետաքրքիր են Ֆրանսիացի երկու նշանաւոր մտածողների՝ Ռենանի և Սարսէի մտքերը վերոյիշեալ հարցի մասին։ Այդ երկու մտածողները այն կարծիքն արտայայտեցին, որ աւելի լաւ է մամուլին տալ կատարեալ ազատութիւն, քան թէ ուզենալով սանձահարել մամուլի անպիտան մասը, դրանով սահմանափակել և մամուլի յարգելի, ընտիր, լաւ մասի ազատութիւնը։ Անհերքելի է որ մամուլի ազատութիւնը կարելի է ի չար գործածել, բայց գեղծումներ գործել կարելի է ամեն բանով։ Միթէ՞ չէ կարելի ի չար գործածել և քաղաքացիական իրաւունքների ազատութիւնը և եթէ այս կամ այն անհատը ի չար է գործածում ընդհանուր քաղաքացիական իրաւունքները, դրանից չէ կարելի հետևեցնել, որ նոյն իրաւունքներից պէտք է զրկել և բոլոր մնացած քաղաքացիներին։ Սրան կամ նրան տպագրութեամբ ամբաստանել,—դա նշանակում է ի չար գործածել տպագրական ազատութիւնը. փողոցում անցնող մի անմեղ մարդուն փայտով ծեծել,—նմանապէս նշանակում է ի չար գործածել քաղաքացիական ազատութիւնը։ Բայց միթէ դրանից պէտք է եզրակացնել հետևեալը. որովհետև մի անհատ ի չար գործածեց գրիչը, իսկ մի այլ անհատ ի չար գործածեց ձեռնափայտը,—ուրեմն բոլոր գրող քաղաքացիներից պէտք է խլել գրիչները, իսկ բոլոր զբօսնող քաղաքացիներին պէտք է արգելել ձեռնափայտերը փողոցում ման ածելու։

Դա հակալոգիական և անարդար եզրակացութիւն կը լինէր։

Ժամանակակից Ֆրանսիացի մտածողների ամենալաւ մասը այն եզրակացութեան է գալիս, որ ընդհակառակն, եթէ վերջին Բուլանժեան ագիտացիայի ժամանակ Ֆրանսիական կառավարութիւնը սահմանափակեր Բուլանժեան կուսակցութեան օրգանների գրելու ազատութիւնը, այդ կուսակցութիւնը անհամեմատ աւելի աջողութիւն կունենար, քան թէ ունեցաւ պարլամենտական վերջին ընտրութիւնների ժամանակ։ Եթէ արգելք դրվեր Բուլանժեականների մաքերի արտայայտութեան,—նրանց մաքերը կը ստանային արդելված պտուղների քաղցրութիւնը և իրանք Բուլանժեականները շրջապատված կը լինէին մի տեսակ մարտիրոսական փայլով, այն ինչ, երբ նրանց թոյլ տրվեց ազատօրէն արտայայտել իրանց բոլոր համոզմունքները,—հետզհետէ սկսեց երևալ նրանց համոզմունքների կատարեալ մերկութիւնը, նրանց մաքերի ու գաղափարների աղքատութիւնը և Բուլանժեականները փոխանակ յաղթող հանդիսանալու, հետզհետէ ընկնելով հասարակաց կարծիքի աչքում, վերջ ի վերջոյ կատարեալ պարտութիւն կրեցին ազգային ընդհանուր ընտրութիւններում։

Աւելի լաւ է մի քանի անհատներ ի չար գործ դնեն մամուլի ազատութիւնը,—որ անխուսափելի մի չարիք է,—քան թէ մի քանի անպիտան անհատների զեղծումների պատճառով՝ բոլոր մնացած գրողները զրկված լինէին գրելու ազատութիւնից։

Այսպէս են դատում ժամանակակից Ֆրանսիացի ամենալաւ մտածողները։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱԹՆԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

—

Պետական կալուածների մինիստրութեան մէջ վաղուց յարուցված հարցը՝ հիմնելու մի չարք կաթնատնտեսական դպրոցներ՝ կաթնային տնտեսութիւնը զարգացնելու համար, ներկայումս համարեա թէ վճռվելու դրութեան մէջ է։

Մինիստրութեան երկրագործական դեպարտամենտում այդ խնդրի առիթով կազմած ծրագիրը արդէն պատրաստ է և շուտով պէտք է ենթարկվի մասնագէտների քննադատութեան։ Այդ նպատակով Ռուսաստանի զանազան կողմերից Պետերբուրգ են հրաւիրված կաթնատնտես մասնագէտներ, որոնք մինիստրութեան ներկայացուցիչների հետ միասին պէտք է քննեն խնդիրը՝ աշխատելով որքան կարելի է երկրի պէտքերին և հանգամանքներին համապատասխան ծրագիր պատրաստել։

Այդ ծրագրով ենթադրվում է նախ հիմնել մի խումբ, այսպէս ասած, կենտրոնական կաթնատնտեսական դպրոցներ, կամ օրինակելի կայաններ, որտեղ հմուտ կաթնատնտեսների ղեկավարութեան ներքոյ պէտք է պատրաստվեն անկախ գործելու ընդունակ կաթնատնտեսներ։ Ապա այդ կաթնատնտեսներին պէտք է յանձնվի զանազան շրջաններում և նոյն իսկ մասնաւոր կալուածներում պահել և կառավարել աւելի փոքրիկ չափով կաթնատնտեսական դպրոցներ, որոնց նպատակը կը լինի մի կողմից կաթնային արդիւնաբերութիւնը զարգացնել, իսկ միւս կողմից ժողովրդին մատիկ կերպով ծանօթացնել արդիւնաբերութեան այդ նշանաւոր ճիւղի հետ։ Մշակվող ծրագրի մէջ մանրամասնօրէն պէտք է որոշվի կաթնատնտեսների և կալուածատէրերի յարաբերութեան ձևը, և նրանց փոխադարձ իրաւունքները՝ զանազան տարաձայնութիւնների առիթ չը տալու համար։

Հաւատում ենք, որ այդ ձևով մշակված մի ծրագիր, որի մէջ մասնակցութիւն են ընդունում բացի մինիստրութեան ներկայացուցիչներից, շատ մասնագէտ անձինք ևս, որոնք լաւ ծանօթ են երկրին և ժողովրդին, կարող է տալ ապագայ ծրագրին այն կենդանութիւնը և գործունէութիւնը, որոնցից սովորաբար զուրկ են լինում միմիայն դիւանատներում մշակված և կազմած ծրագիրները և պրոյէկտները։

Ուրեմն յոյս կարելի է ունենալ, որ շուտով կաթնատնտեսութեան գործը նոր և աւելի հաստատ հիմքերի վրա կը դրվի ամբողջ Ռուսաստանում։ Իսկ յատկապէս Կովկասում կաթնատնտեսութիւնը զարգացնելու համար պետական կալուածների մինիստրութեան պիտի ներկայացվի մի պատրաստի և լաւ մշակված ծրագիր, որը համարեա արդէն պատրաստ է, և որը ենթադրում է Կովկասում ևս հիմնել կաթնատնտեսական մի օրինակելի դպրոց։

Աջողութեան մասին չենք կասկածում։

*

ՏԽՈՒՐ ԵՐԵՒՈՅԹ

—

Կովկասի պաւառական քաղաքներից մէկում նորերումս վախճանվեց մի օրիորդ, որի մահը առիթ է տալիս մեզ մատնացոյց անել մի տխուր երևոյթի վրա, թէև այդ մասին մեր մամուլը քիչ անդամ չէ խօսել։ Օրիորդի վաղահաս մահվան պատճառը չքաւորութիւնն էր։ Նա ուսանում էր Թիֆլիսի օրիորդական գիմնազիայում և չքաւոր ծնողների զաւակ լինելով, կրում էր ամեն տեսակ դառնութիւններ, զրկանքներ, որի հետևանքը եղաւ այն, որ օրիորդը թոքախտ ստացաւ և ուսումը չաւարտած գերեզման մտաւ։ Մենք ճանաչում էինք հանգուցեալին և գիտենք նրա կեանքը։ Արդեօք նկարագրենք այդ կեանքը, այդ դաժան, այդ թշուառ և դառնութիւններով լի կեանքը։ Արդեօք յիշենք այստեղ օրերով ցամաք հացով նրա ապրելը, նրա խոնաւ սենեակը, գըբքեր մուրալը.... Ասենք որ Թիֆլիսի պէս մի քաղաքում նա ապրում էր ամսական մի քանի բուբլիով։ Եւ ինչու համար էր այդ եռանդով և վսեմ ձգտումներով լի օրիորդը կրում այդ դառնու-

թիւնները։ Մթթէ նա չէր կարող բազմաթիւ աղջիկների նման նստել հօր տանը և սպասել «մէկին»։ Բայց նրան, որի նմանները մեր կանանց չրջանում այժմ սակաւաթիւ են, չէր վիճակված այդ խաղալ, հանդիսատ, սովորական կեանքը։ Նա, ինչպէս նրան նման փոքրաթիւ օրիորդները, ոգեորված էր ուսման ծարաւով, նա ձգտում էր գիտութեան, որի միջոցով նա նպատակ ունէր դուրս գալ չրջապատող հոսանքից, և օգտաւէտ լինել իր սեռակիցներին և հասարակութեան։ Սակայն այդ նրան չաջողվեց։ Զքաւորութիւնից նա թոքախտ ստացաւ, թողեց ուսումը և ծաղիկ հասակում մեռաւ.... Եւ քանի-քանի այդպիսիներն են զոհվել, և դեռ քանիսները պէտք է զոհվեն, քանի որ հասարակութիւնը օգնութեան ձեռք չէ կամենում կարկառել...

Բայց ո՞ւր է գնում այդ հասարակութիւնը և ինչ է մտածում։ Որտեղ է նա կորցրել իր բախտը և ո՞րտեղ է փնտռում և ո՞ւմ մէջ։ Արդեօք գիտէ՞ որ ինքն իրան ամենախիստ և ծանր հարուածն է տալիս, զոհելով իր թարմ ոյժերը, իր ապագայ յոյսերը իր անտարբերութիւնով։ Եւ մթթէ այդ անտարբերութեան զոհերը չեն այն տասնեակ ուսանողները, որոնք մեռնում են դեռ համալսարան չաւարտած, տանելով իրանց հետ սառը դերեզման տարիներով փայփայած իդէալները և յոյսերը։ Մթթէ այդ հասարակութեան կեանքի արդիւնքը չէ, որ մեր ուսուցիչների և ուսուցչուհիների մեծամասնութիւնը վարակված է թոքախտով։ Մթթէ այդ հասարակութեան չնորհով չէ, որ մեր սովորող, ուսանող օրիորդների մեծամասնութիւնը կրում է կեանքի ամեն տեսակ դառնութիւնները... Մթթէ այդ հասարակութիւնը չէ՞, որ քաղցած է պահում իր գործողներից չատերին. մթթէ այդ հասարակութեան մէջ չէ, որ մտաւոր ոյժերը և մտքի ղեկավարները քամում են կեանքի դառնութեան բաժակը։ Այդպիսով մեր հասարակութիւնը իր տգիտութեամբ ինքն իրան այնպիսի մի հարուած է տալիս, որի նմանը հազիւ թէ կարող է տալ իր օտարիմ թշնամին։

Երևոյթը տխուր է և ցաւալի։ Առաւել ևս, որ մեր հասկացող դասը անդամ նոյն անտարբեր, նոյն սառ, եսասէրն է։ Մենք իրաւունք ունենք դատապարտել մեր հասկացողներին և իսկապէս այսպէս էլ պիտի լինի, որովհետև նրանք են ղեկավարողը։ Քանի-քանի անգամ մեր մամուլը մատնացոյց է արել գրականագէտների, ուսուցիչների, վարժուհիների, ուսանողների անմիութիւնը դրութեան վրա և հրաւիրել նրա ուշադրութիւնը։ Բայց ո՞վ լսեց այդ ձայնը, ո՞վ արձագանք տուեց։ Ի՞նչ արին մեր հասկացողները։ Բարեհաճեցին նեղութիւն կրել փոքր ինչ ոյժ տալու այդ ձայնին։ Կարծէք այդ ձայնը անապատում էր հնչում։ Եւ իրաւ որ անապատում հնչեց։

Երևոյթը տխուր է և ցաւալի մանաւանդ այնպիսի մի ժողովրդի համար, ինչպիսին է մեր ժողովուրդը, որը դեռ նոր է սա դնում քաղաքակրթութեան աչխարհը։ դիտակցութեան հասնում, քաղաքակրթութեան այդպիսի պատանեկական հասակում այսպիսի վերին աստիճանի անտարբեր լինել դէպի իր նոր սերունդը, իր ապագայ յոյսերը և մտքի մշակները, երբէք ներելի չէ։ Այդ երևոյթը կարող է միայն նրան արատ և նախատինք բերել։ Մատնել թշւառութեան, զոհել թարմ ոյժերը, ապագայ յոյսերը և մտքի մշակներին, այդ միանգամայն դատապարտելի է։

Նպատակ չունենալով խօսելու այս յօդուածով այդ ոյժերի նշանակութեան մասին, բաւականանում ենք այս երկու խօսքով։ Մեր նպատակն էր միայն մատնացոյց անել այդ տխուր երևոյթի վրա և հրաւիրել մեր ժողովրդի, հասարակութեան, մանաւանդ հասկացող դասի ուշադրութիւնը, կենդանի՞ բայց չատ տխուր փաստերի վրա։

Ե. Դ.

ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲԱԹՈՒՄԻ ՃԻՒՂԸ

Ամսիս 15-ին Թիֆլիսում Հայոց Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը պիտի քննէ թէ Թիֆլիսի խորհրդի և թէ տեղական վարչութիւնների 1890 թ-ի համար ներկայացրած նախահաշիւները։ Մեզ համար կարևոր է անչուշտ զլխաւորաբար տեղիս ճիւղի նախահաշիւը, որ քննութեան է առնված հոկտեմբերի 23-ին կայացած տեղական ընդհանուր ժողովում, և որի մասին աւելորդ չենք համարում քանի մի խօսք ասել։

Ընկերութեան Բաթումի վարչութիւնը 1890 թ-ի համար 1,414 բուբլի մուտք նախատեսելով, որոշել էր այդ գումարից 300 բուբլի յատկացնել չքաւոր հայ ուսանողների օգտին, մանաւանդ որ երկու քուրթայիսցի ուսանողների կողմից, որոնց արժանաւորութեան մասին բազմաթիւ բարի վկայութիւններ էր ընդունված, արդէն խնդիրք էր ներկայացված այդ մասին։ Բայց գլխաւոր մտադրութիւնը դարձված էր՝ այստեղ մի իդեական սեռի դպրոց հիմնելու վրա և այս նպատակին յատկացված էր յիշեալ գումարի մեծագոյն մասը (800 բուբլ), և այս այն պատճառով, որ Բաթումում հայ ընտանիքները հետզհետէ բազմանում են և հայ աղջիկներ մնում են առանց տարրական կրթութեան, իսկ դպրոց բանալ առանց կողմնակի նշանաւոր օգնութեան ժողովուրդը չէր կարող։ Վարչութիւնը բացի դրանից 200 ր. նպաստ էր նշանակել արական սեռի դպրոցին ի նկատի ունենալով, որ այս տարի մի նոր դասարան ևս աւելացրած է նրանում։

Հետաքրքրական էին ընդհանուր ժողովում այս առթիւ տեղի ունեցած վիճաբանութիւնները։ Պէտք էր տեսնել թէ ինչպէս մի քանի պարոններ, որոնք դպրոցի հոգաբարձուներ էին և մանաւանդ ժողովի քարտուղարը, որ նոյն ուսումնարանի ուսուցիչն է, յարձակվում էին ուսանողներին յատկացրած գումարի դէմ, և պահանջում էին, որ այդ գումարը փոխանակ նրանց տրվելու, աւելացվի տղայոց ուսումնարանին։ Իզուր վարչութեան նախագահը և անդամները յայտարարում էին թէ կատարելապէս անտեղի էր ընկերութեան ձեռից խլել նրա ամբողջ եկամուտը՝ բացարձակապէս տղայոց և օրիորդաց դպրոցների օգտին, իզուր ցոյց էին տալիս թէ տեղական վարչութիւնը արդէն իր մեծագոյն հոգածութիւնը տածած լինելով օրիորդաց ուսումնարանի վրա, որ կարող է միայն ընկերութեան օգնութեամբը հիմնվել և պահպանվել այս հանգամանքի մէջ՝ նաև տղայոց դպրոցի հոգը մեծ մասամբ նրա վրա ծանրացնելը կատարելապէս անիրաւ կը լինէր և թէ չատ աւելի պատուաբեր և յարմար կը լինէր ընկերութեան համար ունենալ իրան համար երկու կամ գէթ մի ուսանող որդեգիր, իզուր յայտնվում էր նոյն իսկ ժողովականների միջից քանի մի անձինքների կողմից թէ տղայոց դպրոցի հոգաբարձութիւնը փոխանակ ընկերութեան սուղ միջոցներից մեծ օժանդակութիւն սպասելու, պէտք էր բաւականանալ տրված 200 բուբլով և փնտռել եկամտի նոր աղբիւր,—այս բոլորն իզուր էր և ընդհանուր ժողովը զրեթէ բռնի կերպով, և ինչպէս յետոյ երևաց առանց իր ներքին հաւանութեան, հարկադրվեց ընդունել հոգաբարձուների և ուսուցչի պնդումները և զրկեց ուսանողներին։ Ժողովը ցրվելուց յետոյ և դեռ մինչև այսօր տրտունջներ էին լինում այս որոշման դէմ ընկերութեան անդամների մեծամասնութեան կողմից, բայց արդէն ուշ էր։

Թէ որքան դովելի էր վարչութեան միտքը՝ մի կամ երկու ուսանողի նիւթական նպաստ հատկացնել, դրա մասին աւելորդ խօսք է բացատրութիւնների մէջ մտնել։

Սոյն ընդհանուր ժողովում խնդիր յարուցվեց նաև թէ ինչու համար վարչութիւնը ընթերցարանի համար ոչ մի գումար չէ նշանակել։ Դրան պատասխանեց վարչութեան նախագահը, թէ ընթերցարան ունենալու համար հարկ է դիմել ընկերութեան Թիֆլիսի խորհրդին, որ իր կողմից պիտի դիմէ պատշաճաւոր իշխանութեան, թոյլտուութիւն ձեռք բերելու համար։ Եւ որովհետև այս իրաւունքի ստացումն երկար ժամանակի կարօտ է, ինչպէս օրինակներից երևում է, հետևաբար վարչութիւնը պատշաճ չը համարեց դրա մասին ծախս մտցնել իր առաջիկայ նախահաշուի մէջ, կամ մի որ և է գումար անչարժացնել դրա վրա։ Իսկ եթէ թոյլտուութիւնը 1890 տարվայ ընթացքում կը ստացվի, այն ժամանակ վարչութիւնը կատարելապէս վստահ է, որ նա եկամտի մի նոր աղբիւրից կը հոգայ դրա սկզբնական ծախսերը, առանց վնասելու միւս կարեւոր ծախսերին։ Ընդհանուր ժողովը վստահութիւն յայտնեց վարչութեան, թէ այդ և թէ նախահաշուի բոլոր միւս յօդուածները նոյնութեամբ ընդունեց և հաստատեց, չը նայելով ժողովի քարտուղար պ. Տէր-Պետրոսեանի կողմից անընդհատ կրկնվող անտեղի և անհիմն առարկութիւններին։ Այժմ, ինչպէս հաստատապէս տեղեկանում ենք, այս վերջինը՝ կարծես վրէժ հանելու համար, ժողովի տրամադրութիւնը կազմելիս ամբողջովին և զանազան զարդարանքներով պատմել է նրա մէջ իր սեփական անկապ և անիմաստ ճոռոմաբանութիւնը միայն, անտես առնելով կատարելապէս միւս ժողովականների խօսքերը, որոնք ամիսի և հակիրճ լինելով աւելի զիւրին և չուտով կարելի էր արձանագրել։ Նա յիշել է միայն վարչութեան նախագահի խօսածները, այն էլ կիսատ, և միայն այն տեղերը, որոնց զէմ իր մտքով կարելի էր առարկութիւններ յարուցանել։ Օրինակելի բարեխիղճ քարտուղար.... Այստեղ մի անն չան հարց, փակագծի մէջ. ժողովի քարտուղարը իրաւունք ունէր արդեօք իր պաշտօնավարութեան միջոցին, վիճաբանութիւնների մէջ մտնելու և խրվելու։

Բայց թողնելով տեղական ընդհանուր ժողովին իր նիստի արձանագրութեան անճշդութիւնների քննութեան հոգն ու պարտականութիւնը, մենք դառնում ենք նախահաչուին և յոյս ունենք, որ Թիֆլիսի ընդհանուր ժողովը իր մօտակայ նիստում պատշաճաւոր ուշադրութիւն կը դարձնէ նրա վրա և մանաւանդ չի մերժի տեղական վարչութեան խնդրած միջնորդութիւնը՝ Բաթումում ընթերցարան-գրադարան հիմնելու նկատմամբ, որ տեղիս հայ հասարակութեան համար ամենակարևոր հարցերից մէկն է։

Ա.

ՆԱՄԱԿ ԹԷԼԱՒԻՑ

Դեկտեմբերի 3-ին

Մեր նախընթաց նամակը վերջացրինք, մատնացոյց անելով այն հանգամանքի վրա, որ Թէլաւի հայ հասարակութիւնը սարսափելի անտարբեր է և դէպի իր ուսումնարանները, որոնք կազմում են նրա միակ հասարակական հիմնարկութիւնները։ Ուսումնարանների չէնքերը անպէտք են, հնացած են, կարօտ են վերաչինութեան. նստարանները հնադարեան ձևով են և կոտրատված, այնպէս որ նրանք զզալի կերպով վնասում են թէ աչակերտների ու աչակերտուհիների առողջութեանը և թէ կանոնաւոր դասաւանդութեանը—պէտք են նորերը։ Ուսումնարանները չունեն զրադարան, չունեն պատկերներ, մոդելներ և այլ անհրաժեչտ իրեր։ Աչակերտներից և աչակերտուհիներից չատերը աղքատ են, միջոց չունեն ոչ միայն դասական իրեղէնները գնելու և ուսման վարձը վճարելու, այլ և վայել կերպով հագնվելու։ Թէլաւի ուսումնարանները ունեն այնպիսի պակասութիւններ, որոնք պատիւ չեն բերում նրանց մասին հոգացող հասարակութեան..։ Ում պարտքն է հոգալ այդ բոլորի մասին։ Մթթէ միայն հոգաբարձութեան—Ո՛չ. հոգաբարձութիւնը առանց հասարակութեան աջակցութեան մի մեռեալ մարմին կը լինի։ Ցուէք, օգնեցէք և պահանջեցէք, և այն ժամանակ միայն իրագործելի կը լինի ձեր արդարացի պահանջը։

Թէլաւի հայ ժողովուրդը անջատված է թէ հայկական կեանքից և թէ առհասարակ լուսաւոր աչխարհից։ Ի՞նչն է մի ժողովրդի ծանօթացնում և կապում իր ազգի կամ առհասարակ դրսի աչխարհի հետ, եթէ ոչ լրագիրները, ամսագիրները և գրքերը։ Բայց Թէլաւեցին չէ՞ ստանում լրագիր, ամսագիր և չէ կարդում գրքեր, որովհետև չը կայ նրա մէջ հետաքրքրութիւն. նա իր սովորութեան համեմատ անտարբեր է դէպի դրսի աչխարհը, դէպի ընթացիկ կենսական հարցերը։

Թէլաւի հայերը դեռ բոլորովին վրացախօս են և ըստ երևոյթին ձգտում էլ չունեն իրանց մայրենի լեզուն սովորելու (աչակերտների և աչակերտուհիների թվից կարելի է եզրակացնել)։ Ղշնախի հայերն էլ վրացախօս են, բայց պէտք է խոստովանենք, որ այնտեղ տեսանք աւելի ձգտում, յանկութիւն և ջանք մայրենի լեզուն սովորելու։ Բաւական է յիշել, որ այնտեղ մօտ 30 ընտանիքներում «Աղբիւր» է ստացվում։ Գուցէ ընթերցողը հարցնէ՝ ապա ինչ են արել Թէլաւի հայոց ուսումնարանները մինչև այժմ, ո՞ւր են նրանց տուած արդիւնքները։ Ուսումնարանների արդիւնքները, ընթերցող, հասարակութեան անտարբերութեան և սառնութեան հանդիպելով՝ ինչպէս և պէտք էր սպասել, ոչնչացել են։ Աչակերտները աւարտելով հայոց ուսումնարանը, տանում են իրանց հետ մայրենի լեզուի մի չնչին պաչար, որը աջող հանգամանքներում կարող էր աճել, զարգանալ, բայց որովհետև աւարտելուց յետոյ նրանք անմիջապէս մտնում են իրանց հայրերի խանութները, ուր ամեն ինչ վրացերէն լեզուով է կատարվում, ուստի մոռանում են և այն, ինչ որ դուրս են տարել ուսումնարանից։ Օրիորդների մի մասն էլ մնալով տանը, նոյնպէս մոռանում է հայերէնը, երկար ժամանակ չը գործածելուց, որովհետև ընտանիքի մէջ գործածական լեզուն՝ վրացերէնն է միայն։ Ուսումնարանների աղդեցութիւնը, ի հարկէ, աւելի կը լինէր, եթէ այստեղի հասարակութիւնը սէր տածէր դէպի այդ ուսումնարանները, նրանց չահերը իր սրտին մօտիկ ընդունէր, նրա բարեկաւութիւնը տեսնել ցանկանար, մի խօսքով եթէ սերտ կերպով կապված լինէր այդ ուսումնարանների և նրանց մէջ գործողների հետ։

Վերջացնում ենք այս անգամ մեր նամակը, հրաւիրելով Թէլաւցիներին զարթնել, չուրջը նայել, թողնելով պախարակելի անտարբերութիւնը՝ գործել և միչտ գործել։ Գործունէութիւնը կեանք է, իսկ անգործութիւնը,—մահ....

Գ. Թ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Դեկտեմբերի 6-ին, չորեքչաբթի օր, Նորին Կայսերական Բարձրութեան Թագաժառանգ Ցեսարեվիչի անուանակոչութեան տօնը լինելով՝ Թիֆլիսի բոլոր փողոցները ամբողջ օրը զարդարված էին դրօչակներով, իսկ երեկոյեան քաղաքը լուսաւորված էր։

—

Պետերբուրգում հրատարակվող Սուվորինի օրգանը՝ «Новое Время» լրագիրը, վերջին օրերս ամենախայտառակ և այն էլ թագնված կերպով հայհոյանքներ և վիրաւորանքներ է տեղում երևելի երաժիչտ Ռուբինչտէյնի դլխին, որի յիսնամեայ յօբելեանը նորերս փառաւոր կերպով տօնվեց։ Եւ այդ բոլորը միայն այն պատճառով, որ Ռուբինչտէյնի երակներում հրէական արիւն է հոսում....

—

Վանից գրում են, որ Տաղվէրան ու Սեան գիւղերից ահագին քանակութեամբ ոչխարներ քշեցին ու տարան քիւրդ աւազակները։

—

Ստացանք Մարսէլից, պ. Կարապետ Կիւլպէնկեանցից 5 բուբլի յօգուտ հանդուցեալ Բաֆֆիի գրքերի հրատարակութեան։

—

Կ. Պոլսի կաթոլիկ հայերի կաթողիկոսական քարտուղարից մի նամակ ստացանք, որի մէջ հերքվում է մեր Կ. Պոլսի թղթակցի հաղորդած և «Մշակի» № 121-ի մէջ տպված այն տեղեկութիւնը, թէ՝ «հայ կաթոլիկ հասարակութեան մի մաս, Ազարեան պատրիարգի վարչութենէ, իբր հակազդային, զոհ չըլլալով, խմբովին պէտք է դիմէ եղեր էջմիածնական եկեղեցու գիրկը»։ Ներսէս վ. Աճեմեանի յիշեալ նամակը աւելորդ ենք համարում տպագրել. մեր թղթակցի նամակը, որ տպված էր «Մշակի» № 121-ի մէջ, ոչինչ պաշտօնական հերքման պէտք չունի, քանի որ ինքն թղթակիցը, վերոյիշեալ լուրը հաղորդելով, աւելացնում է, որ հաղորդում է միմիայն որպէս լուր, երաշխաւոր չը լինելով յիշեալ լուրի ստուգութեան մասին։

—

Այսօր, չաբաթ օր, դեկտեմբերի 9-ին Թիֆլիսի ժողովարանի դահլիճում լինելու է կոնցէրտ՝ բարեգործական նպատակով։ Կոնցէրտի սկիզբը 8½ ժամին է։ Կոնցէրտի պրոգրամը չատ բազմակողմանի է։ Մասնակցելու են. տիկին Ռնտիլովա (պիանոի վրա ածող, Ռուբինչտէյնի աչակերտուհի), Թիֆլիսցիներին ծանօթ երգչուհի օրիորդ Ամիրովա, ջութակ ածող պ. Կոլչին և վիլիոնչելի վրա ածող պ. Սարաջև։

—

ՓՕԹԻՑ մեզ գրում են. «Նոյեմբերի վերջերին անցնելով հայոց եկեղեցու մօտով, նկատեցի պանդուխտ հայ մշակների մի խումբ, որոնք չրջապատելով մի դագաղ, վերջին հրաժեչտն էին տալիս իրանց ընկերոջ, որը անչուշտ ոսկի սարերից օգտվելու էր եկած։ Ցուրտ եղանակին սարսափելի տեսարան էին ներկայացնում Մուչի դաւակների թախծալից, ցրտից կապտացած դէմքերը։ Երևի այդ տեսարանը չատ էր ազդել երիտասարդ քահանայի վրա, որը աղդու կերպով նը-կարագրեց նրանց դաղթականութեան վնասակարութիւնը իր բոլոր դառն հետևանքներով։ Նա ազաչում, պաղատում, խնդրում էր նրանց վերադառնալ իրանց հայրենիքը, չը խաբվել սնոտի յոյսերով՝ չը մնալ օտարութեան մէջ, ուր դաժան աչխատանքի և կեանքի ծանրութեան ճընչ-

ման տակ օտարութիւնը դառնում է նրանց համար վաղաժամ օտար գերեզման։ Եւ այդպիսի զոհերի թիւը մշակների մէջ, մանաւանդ այսպիսի ծուլեղբեայ խոնաւ քաղաքներում, ուր դիմում են նրանք փող աշխատելու յուսով, բաւական մեծ է։ Կեանքի պայմաններին անծանօթ հայ մշակները խմբերով՝ 8—10 և կամ աւելի հոգի բնակվում են մի փոքրիկ, ցած, խոնաւ, կեղտոտ խրճիթի մէջ։ Խօսք չը կայ թէ, առողջապահական տեսակէտից նայելով, ինչ կը լինի պարզ օդի մէջ մեծացած հայ մշակների դրութիւնը այդպիսի անյարմար խրճիթներում։ Հայրենիքից նոր եկած մշակը, որ զուարթ, գէր և առողջ է լինում, կարճ միջոցում ենթարկվելով այդպիսի բնակարանների ազդեցութեան, չուտով կորցնում է իր առողջութիւնը։ Նա նիհարանում, գունատվում և հիւանդանում է։ Տարաբաղդաբար, օտարութեան մէջ ևս նա չունի մի կարեկից, խորհրդատու, որը հասկացնէր նրան տեղական պայմանները։ Այդ դէպքում մենք չենք կարող լռութեան տալ այն համակրելի ուղղութիւնը, որ մշակների վերաբերմամբ բռնած ունի Փոթիի երիտասարդ ցակոբ քահանայ խուցեանց։ Նկատի ունենալով մշակների ցաւալի, անմխիթար դրութիւնը, որին նրանք ենթարկվում են անգիտակցաբար, այդ քահանան թէ եկեղեցում և թէ յաճախելով նրանց բնակարանները՝ քարոզներ է խօսում և հարկաւոր խորհուրդներ է տալիս նրանց։ Նրա աշխատանքի, նրա խորհուրդների ազդեցութեան պիտի վերազրել չատերի խմբով հայրենիք վերադառնալը։

—

Ինգլուէնցիան այնքան սաստկացել է Թիֆլիսում, և դպրոցներում հիւանդացողների թիւը այնքան մեծ է, որ մտադրութիւն կայ մի առ ժամանակ դադարեցնել դասաւանդութիւնը բոլոր ուսումնարաններում։

—

Դեկտեմբերի 5-ին Թիֆլիսի Ժողովարանում, ըստ սովորութեան, նշանակված էր առաջին ընտանեկան երեկոյթը։ Ժողովարանի աւադները և բոլոր սպասաւորները նրատարոի սպասում էին հասարակութեան,—բայց ժողովարանի դահլիճները այդ երեկոյ մինչև վերջն էլ անմարդաբնակ անապատի կերպարանք ունէին....

—

Ամեն օր բաց անելով Կովկասի զանազան կողմերից ստացվող բազմաթիւ նամակները,—աւելի և աւելի համոզվում ենք, որ ամեն տեղ տիրապետող տարափոխիկ հիւանդութիւնների պարագլուխը թէ քաղաքներում և թէ նոյն իսկ չատ գիւղերում՝ հանրահռչակ ինֆլուէնցիան է.... Ուրիշ աւելի ուրախալի նորութիւն փոստը մեզ չէ հաղորդում։

—

ԷՋՄԻԱԾՆԻՑ մեզ գրում են. «Մի քանի օր առաջ Էջմիածին տանող ճանապարհի վրա անայայտ չարագործները սպանել են երևանաբնակ մի հայի, որը պարապում էր ցորեն գնելով։ Կարծում են, որ կողոպտելու նպատակով են սպանել նրան։ Խեղճն ճանապարհից մի փոքր հեռու մորթել էին. գլուխը մինչև այժմս էլ չէ գտնված։ Դիակը անգլուխ թաղեցին»։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Քաղաքից քիչ հեռու, խաչափարախ գիւղում անասունների ցաւ է առաջացել։ Անասելի քանակութեամբ կոտորվում են եղներ ու կովեր։ Լուսաբացին բռնում է ցաւը, մի ժամվայ մէջ անասունը բառանչելով վայր է ընկնում և սատկում։ Պատմում են, որ արդէն երեք բժիշկ են գնացել այդտեղ. հետևանքը դեռ յայտնի չէ. հիւանդութիւնը խաչափարախից անցել է Ուլուխլու, Հաջի-Եղլար գիւղերը և նոյն կոտորածը շարունակում է։

—

Մեզ գրում են ԵՐԵՒԱՆԻՑ. «Ինֆլուէնցիա Երևանն էլ այցելեց։ Տեղական դրուժինայի զինուորներից 100 հոգի վարակված են այդ հիւանդութեամբ. խանութներում կօշկակարները, դերձակները և այլ արհեստներով պարապողները նոյնպէս դանդատվում են այդ նոր ցաւից։ Խեղճ արհեստաւորները ամբողջ օրը ոչինչ չեն կարողանում անել»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԻՆԱԴԱԴԱՐԻ ՀԱՐՑԸ

—

Անգլիական ազատամիտ կուսակցութիւնը իր տաղանդաւոր պարագլուխ՝ Գլադստոնի ղեկավարութեամբ պատրաստվում է մի նոր նշանաւոր և միջազգային բարօրութեան նպաստող քայլ արել։ Հարցը նրանումն է, որ ինչպէս հաղորդում են մի քանի անգլիական՝ հաւատի արժանի լրագիրներ՝ Գլադստոն իր կուսակցութեան հետ միասին որոշել են մի առաջարկութիւն ներկայացնել անգլիական պարլամենտին՝ ընդհանուր միջազգային զինադադար անելու համար։

Դա մի համակրելի և գովելի միտք է։ Ամբողջ Եւրոպան մի քանի տարի է արդէն այնքան հընչվում է զինուորական ծախսերի տակ, եւրոպական բոլոր հասարակութիւնների վրա միլիտարիզմը այնքան ծանր բեռ է դրել, որ չատ ուրիշ կենսական խնդիրներ յետին տեղն են բռնել և մոռացութեան տրվել. եւրոպական պետութիւնների կատաղի սպառազինութեան պատճառով, ամբողջ Եւրոպան օրից օր աւելի ծանր կացութեան մէջ է ընկնում։

Մենք հաւատում ենք, որ երևելի պետական գործիչի այս գովելի միտքն էլ, ինչպէս նրա ուրիշ չատ համակրելի և մարդասիրական մտքերը՝ կիրագործվի։ Գլադստոն իր կուսակցութեան հետ միասին վճռել են առաջարկել անգլիական կառավարութեան, որ այդ խնդիրը քննելու համար միջազգային կ օ ն ֆ ե ր ե ն ց ի ա գումարվի։ Այդ կոնֆերէնցիան, անկասկած կը հետևի Գլադստոնի խմբի ուղղութեան, որովհետև այդ ուղղութիւնն է եւրոպական հասարակաց կարծիքի արտայայտութիւնը։

ԹԻՒՐՔԻԱ

—

Հետևեալ տեղեկութիւններն ենք կարդում պաշտօնական «Правительственный Вѣстникъ» լրագրում. «Թիւրքաց տեղական իշխանութեան թուլութեան և անհոգութեան պատճառով, արնաուտների կամայականութիւնները Իպեկեան չրջանում ներկայումս չեղած կերպարանք են ստացել։ Չը կայ ոչ մի քրիստոնեայ գիւղ, որտեղ արնաուտները բռնութիւններ և նոյն իսկ սպանութիւններ չը գործ դնէին. չը կայ ոչ մի ընտանիք, որը այսպէս թէ այնպէս տանջված չը լինէր նրանցից։ Ոստիկանութիւնը ոչ մի օգնութիւն չէ ցոյց տալիս ազգաբնակութեան. դատարան չը կայ. քրիստոնեայ գիւղի բնակիչները իրանք իրանց պաշտպանել անկարող են, որովհետև նրանց արգելված է զէնք կրելը, որը անարդել կերպով կրում են ալբանցիները։ Իրանց գոյութիւնը ըստ կարելոյն պահպանելու համար, բնակիչներից չատերը կամ ազդեցիկ արնաուտների հովանաւորութեան են դիմում՝ փող տալով,—որը չատ սերբերի համար անտանելի դժուարութիւն է,—և կամ ամեն բան ալբանցիներին թողնելով՝ գաղթում են դէպի Սերբիա։ Այդպէս, օրինակ, անցեալ ամառ այնտեղ գաղթեց Իպեկեան չրջանից աւելի քան 120 տուն։ Եթէ այդպէս չարունակվի, հեռու չէ այն ժամանակը, երբ ամբողջ Իպեկեան չրջանը կը բռնեն ալբանցիները։»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Բրազիլիայի Դօն-Պեդրօ նախկին կայսրը, խօսելով «Daily News» լրագրի թղթակցի հետ, ասել է նրան, թէ ինքն գահից հրաժարման թուղթ չէ ստորագրել և թէ գահից հրաժարվելու միտք չունի։ Մի և նոյն ժամանակ Դօն-Պեդրօ աւելացրել է, թէ ինքն հրաժարվեց իրան միանուագ առաջարկած 3 միլիոն ռուբլուց և իր տարեկան թոշակից։

—«Նիւ-Եօրկ-Հերալդում», որպէս հեռագրում են Բերլինի լրագիրներին, մի տեղեկութիւն տվեց այն բանի մասին, թէ 500 միլիոն դրամագլխով միջազգային կաթոլիկական բանկ է հիմնվում։ Բանկի վարչութիւնը կը գտնվի Նիւ-Եօրկում և նրա բաժանմունքները մտադրութիւն կայ բանալ Եւրոպայի բոլոր գլխաւոր քաղաքներում։ Այդ բանկի նպատակն է պապի չահերը պաշտպանել։

—Բրազիլիայից գրում են, որ հանրապետութիւնը հաստատելուց յետոյ այնտեղից տքսորված են 3,000 եղուիտներ։

—Նոյեմբերի 26-ից սկսած Պարիզում ինֆլուէնցիա հիւանդութիւնը աւելի է սաստկացել։

—Բերլինից գրում են, որ այնտեղ ևս ինֆլուէնցիան աւելի սաստկացել է վերջին օրերում։

—Բերլինի քաղաքային դումայի ձայնաւորների մէջ սոցիալիստ ձայնաւորների թիւը վերջին ժամանակներս քառապատկվել է, համեմատելով առաջվայ հետ։

—Լօնդօնում կրկին բանւորական շարժումներ են սկսվել։

—Պօմերանիայում գիւղատնտես դերմանացիները հարց են յարուցել՝ չինացի բանւորներ բերել տալու մասին, պատճառաբանելով այդ առաջարկը նրանով, որ բանւորները քիչ են և թանգ։

—Ցայտնի ճանապարհորդ Ստէնլի այս օրերս արտասանած մի ճառում յայտնեց, որ ինքն իր պարտքը դեռ կատարած չէ համարում, որ իր ապագան կապված է Աֆրիկայի հետ, և որ ինքն դեռ այդ երկրում չատ գործ ունի կատարելու։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մօտ օրերս Պետերբուրգի օրիորդական փակ ուսումնարաններից մինում մի քանի աշակերտուհիներ հիւանդացան ստամոքսային խանգարումով։ Քննութիւնից երևաց, որ հիւանդութեան պատճառը ամանեղէնների կլէկն է, որի մէջ բաւական մեծ տոկոս մկնդեղ են գտել։

*
* *

Springsield-ում (Ամերիկայում) ապրում է 19 տարեկան մի նեգրուհի, միսս Sallie Mac Allister ազգանունով, որ իր չաղութիւնը դերազանցում է մինչև այժմ յայտնի դէրութիւն ունեցողներից։ Նրա բարձրութիւնը 5 ֆուտ և երկու դիւյմ է, իրանի չրջանակը հաւասար է 7 ֆուտ և երեք դիւյմի. արմուկից վեր ձեռքերի հաստութիւնը 3 ֆուտ և $6^1/_4$ դիւյմ։ Մարմնի կշիռը մօտ 15 պուդ է. օրիորդը չատ առողջ է և լուացարարութեամբ է պարապում։

*
* *

Շվէյցարիայի համալսարաններից Բազելի համալսարանում մինչև այժմ կանայք չեն ընդունվում։ Վերջին ժամանակ համալսարանական խորհրդին մի քանի կանայք խնդիրք տուին, որ Բազելի համալսարանը ևս ընդունի կանանց բժշկական բաժանմունքում, ինչպէս որ Շվէյցարիայի միւս համալսարանները ընդունում են։ Բազելի համալսարանի ուսանողները ժողով կազմեցին և երկար վիճաբանութիւններից յետոյ վճռեցին դառնալ բէկտօրին և խնդրել, որ կին ուսանողուհիներին համալսարան մտնելն արգելվի։

*
* *

Լօնդօնի լրագիրները հաղորդում են, որ սուլթանը մտադրվել է Իլդիզ-Կիոսկի և Դոլմաբախչէի մէջ գտնված թանգագին իրեղէնները կարգի բերել և նրանց ցուցակ կազմել։ Լօնդօնի ամենալաւ գնահատողներից մէկը կանչվել է Կ. Պոլիս գնահատելու այդ թանգագին իրեղէնները։ Այդ իրեղէնները երբէք ցուցակագրված չեն եղել, որոնք պատմական մեծ նշանակութիւն կարող են ունենալ։ Նախկին դարերի սուլթանների ձեռք բերած հարստութիւնները միլիոններով պէտք է հաչուել։

*
* *

Լաուսօն մի նախագիծ է կազմել, և պէտք է առաջարկէ անգլիական համայնքների ժողովին։ Նախագծի նպատակն է, արգելել խմիչքների վաճառումը պարլամենտի չինութեան մէջ։ Լաուսօն ասում է իր նախագծի մէջ թէ պատգամաւորները ժողովրդին պէտք է ժուժկալութեան օրինակ տան։

*
* *

Կանդասը կատարելապէս դրախտ է ամերիկական կանանց համար։ Այնտեղ նրանք ձայնի իրաւունք ունեն միայն տեղական ընտրութիւններում, բայց իսկապէս տիրապետում են ամբողջ նահանգում։ Նրանք քաղաքային խորհրդի անդամների պաշտօն են վարում, և քաղաքային խորհուրդը ամբողջապէս բաղկացած է կանանցից։ Կանդասում կան բազմաթիւ կին-քարոզիչներ, բժիշկներ և փաստաբաններ և սակաւ չեն կանանց աշխատանքը կատարող տղամարդիկ։ Այնտեղ կան կին-ֆերմէրներ, բանկիրներ, վաճառականներ, ուսումնարանների տեսուչներ, խմբագիրներ և դրաչարներ։ Կան մինչև անգամ կին պոլիցիականներ։ Ամենից չատ հաւածվում են այն տղամարդիկ, որոնք չը նայելով տեղական սահմանադրութեան արգելման, դաղտնի կերպով ձեռք են բերում խմիչքներ և հարբում են։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՕԴԵՍԱ, 6 դեկտեմբերի։ Ցուրտը 10 աստիճանի է հասնում։ Օդեսայի ու Դնէպրեան, Դնէստրեան և Դոնայեան նաւահանգիստների մէջ նաւագնացութիւնը կատարելապէս դադարեցրած է։

ՐԻԳԱ, 6 դեկտեմբերի։ Երէկ երեկոյեան տեղի ունեցաւ քաղաքային դումայի ձայնաւորների առաջին նիստը, որի ժամանակ վիճաբանութիւնները տեղի ունեցան ռուսերէն լեզուով։

ՎԻԵՆՆԱ, 6 դեկտեմբերի։ Սերբիայի դեսպանը հաղորդեց Կալնոկիին, որ աղի մենաւաճառութեան վերաբերմամբ Սերբիայի ձեռք առած միջոցները բոլորովին թշնամական ձգտումներ չունեն դէպի Աւստրիան։ Սերբիական կառավարութիւնը ցանկանում է գործը վերջացնել համաձայնութեամբ։—Պատգամաւորների ժողովի այն օրվայ նիստում կոմս Ցաֆիէ ասեց, որ ներկայ հանգամանքներում պետութեան չահերը պահանջում են սահմանադրութեան խաղաղ զարգացումը։ Ահա թէ ինչու կառավարութիւնը չէ կարող առաջարկել այնպիսի փոփոխութիւններ անելու սահմանադրութեան մէջ, ինչպէս է կայսրին բոհեմական թագով թագադրելը։ Կառավարութիւնը այնու ամենայնիւ հաւասար հոգատարութեամբ է վերաբերվում դէպի Բոհեմիայի երկու ազգութիւնների օրինական պահանջներն էլ։

ԼՕՆԴՕՆ, 6 դեկտեմբերի։ Էմին-փաշան վտանգից ազատ է և չուտով կը գայ Զանզիբար։

ՐԷՎԷԼ, 6 դեկտեմբերի։ Քաղաքային վարչութեան երէկվայ նիստում վիճաբանութիւնները առաջին անգամ ռուսերէն լեզուով եղան. վիճաբանութիւններին մասնակցում էին վեց ձայնաւորներ։ Ռուսաց լեզուն, ըստ երևոյթին, դժուարութիւն չէր պատճառում գործերի քննութեան ժամանակ։

ԼՕՆԴՕՆ, 6 դեկտեմբերի։ Աֆրիկայի արևելեան ափի գերմանական կայսերական կոմիսար Վիսման, կալանաւորելով Բուշիրի առաջնորդին, հրամայեց կախաղան բարձրացնել նրան։—Շանխայից ստացված հեռագրով հաղորդում են, որ Կորէում անկարգութիւններ եղան և որ տեղական իշխանութեանը աջողվեց թագաւորի կեանքի դէմ եղած դաւադրութեան առաջն առնել։ Թագաւորը պատրաստականութիւն յայտնեց գահից հրաժարվել։—Լօնդօնի լրագիրների տեղեկութիւններին համեմատ, պարլամէնտը կը բացվի փետրվարի 11-ին (նոր տօմարով)։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 դեկտեմբերի։ Երէկ Թագաժառանգ Ցէսարեվիչի անուանակոչութեան օրը զոհացողական մաղթանքներ կատարվեցան բոլոր եկեղեցիներում։ Անիչկով կոչված պալատի եկեղեցում ներկայ էին Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհին, Մեծ Իշխանները և Իշխանուհիները, և ավիտայի մօտիկ անձինքը։ Ժամերգութիւնից յետոյ Թագաժառանգը շնորհաւորութիւններ ընդունեց։ Բարձրագոյն ներկայութեամբ եկեղեցական հանդէս կատարվեց այն զինուորների համար, որոնք երէկ տօնում էին իրանց զօրագնդի տօնը։ Հանդիսաւոր մաղթանքի ժամանակ Թագաժառանգը և բոլոր Մեծ Իշխանները հանդիսաւոր կերպով զեկավարում էին իրանց զօրաբաժինները։ Զօրահանդիսից յետոյ Անիչկով պալատում տեղի ունեցաւ նախաճաշիկ, որի ժամանակ Թագաւոր Կայսրը խմեց այն զօրաբաժինների կենացը, որոնց տօնն էր։—«Новое Время» լրագիրը հաղորդում է, որ Ֆինանսների միխիստրութեանը ներկայացրած է այն առևտրական-արդիւնաբերական բանկի կանոնադրութիւնը, որը հիմնում են Մոսկվայի դրամատէրերը՝ Պարսկաստանի հետ ունեցած առևտուրը զարգացնելու համար։ Հիմնական դրամագլուխը 3 միլիոն ռուբլի է։ Լրագիրները հաղորդում են, որ պրոֆէսոր Բոտկին երեք չաբաթից աւելի է, ինչ պառկել է։ Նրան բժշկում է բժիշկ Բելոզոլովի. անգլիացի բժիշկ Լաուզոնդ, ի նկատի ունենալով հիւանդի դրութիւնը, հրաժարվում է նրան օպէրացիայի ենթարկել։

ԲԵՐԼԻՆ, 7 դեկտեմբերի։ Այստեղ տպաւորութիւն է գործում «Post» լրագրի պատասխանը Վիէննայի «Politische Correspondenz» լրագրի հասցէով. Բերլինի կիսապաշտօնական թերթը մերկացնում է Վիէննայի լրագրի վտանգաւոր մտքերը, որոնք կարող են ծանր արգելքներ ծնեցնել դաշնակից միապետների խաղաղասէր ձգտումներին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 դեկտեմբերի։ «Моск. Вѣд.» լրագրի հաղորդած լուրը հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութեան բարձրաստիճան պաշտօնեաների չրջանում ենթադրված փոփոխութիւնների մասին, պաշտօնապէս հերքվում է։—Բժշկապետ Բոտկինի առողջութեան դրութիւնը փոքր ինչ լաւանում է։

ԲԱԳՈՒ, 8 դեկտեմբերի։ Այսօր, ժամը երկուսին, արտիլէրիական պահեստում ռումբն ընկաւ բանող արտիլէրիական զինուորի ձեռքից և տապալվեց. դրանից հրդեհ սկսվեց, որը երեք ժամից աւելի չարունակվեց։ Այրվեցան փամփուշտներով և ռումբերով լի ծածկոյթը և պահեստը և մինչև հարիւր հազար հրացանի փամփուշտներ։ Ցաներկու զինուորներից չորսը վիրաւորվեցան և հիւանդանոց ուղարկվեցան, չորսը չեն գտնված, իսկ մնացած չորս զինուորները աղատվեցան։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍԵՐԳԱԿ ՐՕՄԱՆՕՎԻՉ ՇԱՀԳԻՆԱՐԵԱՆ *ցաւով սրտի յայտնելով իր Ծանօթներին և ազգականներին իր մօր՝* ՄԱՐԹԱ ՇԱՀԳԻՆԱՐԵԱՆԻ *մահուան մասին, խընդրում է նրանց շնորհ բերել յուղարկաւորութեանը, որ տեղի կունենայ իր սեփական տնից, Գէօրգիէվսկայա փողոցի վրա, դէպի Նորաշէնի եկեղեցին կիրակի օր, առաւօտեան 10 ժամին։* 1—1

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կաւկիա, Վ.օրօնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ՐՈՒԴԿՕՎՍԿԻ—10—11 *ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.*
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—11½—12 *ժ. կանանց և երեխայոց ց.*
ԲԵՆԿԼԵՎՍԿԻ—11—12 *ժ. ականջի, կոկորդի, քթի ց. և սիֆիլիսի (վիրաբուժ. և ատամացաւի*
ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 *ժ. երեքշաբթի, ուրբաթ և կիւրակի, կանանց ց.*
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 *ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիւրակի։*

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ԳԱԴՕՄՍԿԻ—5½—7 *ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.*
ՓՈՒԼԻՆԵԱՆ—5½—6½ *ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրոտերապիա)։*
ԲԵՆԿԼԵՎՍԿԻ—7—8 *ժամ.*

Հիւանդանոցումն են մանկաբարձուհիք՝ Երևանցեան և Արտաշեան։
Ճար—50 կ։ Համախորհրդի (կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ։

Հիւանդանոցի փոխ-վերատեսուչ ՐՈՒԴԿՕՎՍԿԻ

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1890 Г.
(ТРЕТІЙ ГОДЪ ИЗДАНІЯ)

„ПАНТЕОНЪ ЛИТЕРАТУРЫ“

ЕЖЕМѢСЯЧНЫЙ ИСТОРИКО-ЛИТЕРАТУРНЫЙ ЖУРНАЛЪ.

Въ предстоящемъ году „Пантеонъ Литературы“ будетъ издаваться по прежней программѣ и при участіи прежнихъ сотрудниковъ.

Въ числѣ произведеній, предназначенныхъ къ помѣщенію въ первыхъ книжкахъ журнала, назовемъ слѣд: 1, Полное собраніе сочиненій Василія Петровича Боткина, автора „Писемъ объ Испаніи“ и пр., 2) Поэмы Оссіана) перев. съ примѣч. и предисловіемъ Е. В. Балобановой, 3) Письма темныхъ людей, перев. А. И. Кирпичникова, 4. Чосеръ, Кентерберійскіе разсказы, перев. М. И. Кудряшева, 5) Аріосто, Неистовый Роландъ, поэма, перев. С. Ф) Уварова 6) Л. Н. Майкова, Матеріалы для біографіи Вал. Н. Майкова, 7) М. Гюйо, Современная эстетика, и мн. др.
ПОДПИСНАЯ ЦѢНА: Съ дост. и перес. на годъ. 8 р., 6 мѣс. 5 р., 1 мѣс. 1 р.,

Выписывающіе „Пантеонъ Литературы“ за 1888 и 1889 гг. уплачиваютъ: за всѣ три года—20 р., за два года—15 р. Разсрочка платежа—по соглашенію.

Подписка принимается: въ редакціи журнала „Пантеонъ Литературы“ въ Спб., Захарьевская, д. 19, а также въ книжныхъ магазинахъ „Новаго Времени—въ С.-Петербургѣ, Москвѣ, Харьковѣ и Одессѣ. Книгопродавцамъ дѣлается уступка въ размѣрѣ 5%.

5—5 Редакторъ-издатель А. Чудиновъ.

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ *և* ԲԱԹՈՒՄԻ *մէջ և փոխադարձ, մտնելով կ.* ՊՈԼԻՍ, ՍԱՄՍՈՆ *և* ՏՐԱԳԻԶՕՆ։

Երթևեկութիւնը չոգենաւերի 1889 թ-ի վերջին քառորդի համար փոխված է, սկսած հոկտեմբերի 11-ից. այդ փոփոխութիւնը վերաբերվում է Բաթումից չոգենաւի դուրս գալուն, որը նշանակված է չորեքշաբթի օրերը, երկու շաբաթ մի անգամ, փոխանակ հինգշաբթի օրերը։

ԲԱԹՈՒՄԻՑ ԴՈՒՐՍ ԿԸ ԳԱՆ

11 Հոկտեմբերի	չոգենաւ	‹ՄԻՆԴԵԼԻԱ›
25 »	»	‹ԱՐՄԷՆԻԱ›
8 Նոյեմբերի	»	‹ԱՆԱՏՕԼԻԱ›
22 »	»	‹ՄԻՆԴԵԼԻԱ›
6 Դեկտեմբերի	»	‹ԱՐՄԷՆԻԱ›
20 »	»	‹ԱՆԱՏՕԼԻԱ›

Տեղեկութիւնների համար ճանապարհորդների և բեռների մասին պէտք է դիմել Ընկերութեան ագենտներին.

Թիֆլիսում. պ. ԸՐՆՕԻՆ, *Նախկ. Արծրունու գալերէայում, № 14.*
Բաթումում. պ. ԳԱՐԱՆԻՕՆԻՆ, *Նաբերէժնայում։*

2—2 (*Ե. շ.*)

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ԼԷՕԻ

„ԿՈՐԱԾՆԵՐ“

Վէպը։

Գինն է 50 կոպէկ։ կարելի է գնել Թիֆլիսի գրավաճառանոցներում

5—5

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է

ՍԱՖԻ-ՍԱՏԻՐԻ

(Արտակ-Աղէքսանդր-Տէր-Սարգսեան Պարկեանց)

ԲՈՂԲՈՋԻ

I *գրքույկը*

(ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ)

Բաժանորդագինը 25 *կոպէկ է։*

2—3

ԼՈՒՄԱՑԻ „ԿՈՂՈՊՏՎԱԾ ԵԿԵՂԵՑԻ“ *վէպը վաճառվում է՝ Թիֆլիսում—կենտրոնական գրավաճառանոցում և Բաքու—կասպեան գրավաճառանոցում։ Գինն է՝ 1 ռուբլի։ Գիրքը ձեռք բերել ցանկացող օտարաքաղաքացիք կարող են դիմել և այս հասցէով՝* Тифлисъ, Типографія канцел. Главноначальствующаго, Сергѣю Симоновичу Назарянцу. 5—10 (*շ.*)

ԿԻՐԱԿԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ 1889 Թ.

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ

լինելու է

ՊԱՐԱՀԱՆԴԷՍ-ՎԻՃԱԿԱԽԱՂՈՎ

Ցօգուտ Հայուհեաց Բարեգործական ընկերութեան։

Տոմսակների գինն է՝ աղամարդկանց 2 ռ. կանանց 1 ռ.

2—2

По семейнымъ обстоятельствамъ ПРОДАЕТСЯ сельская **АПТЕКА** въ уѣздномъ городѣ Новобаязетѣ. Подробности у владѣльца.

Ընտանեկան պատճառներով ծախվում է ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏ *գաւառական քաղաքում մի գիւղական* ԴԵՂԱՏՈՒՆ։ *Պայմանների մասին տիրոջից տեղեկանալ։*

4—4 (*Ե. շ.*)

ԲԺԻՇԿ ՊՐԷՕԲՐԱԺԷՆՍԿԻ

Մասնաւորապէս բժշկում է էլէկտրականութեամբ, ֆարադէական և գալվանական հոսանքով ձեռքերի և ոտների անդամալուծութիւնից, րէվմատիզմից, նեարվային հիւանդութիւններից և կոնրակտուրայից (մկանունքների անդամալուծութիւն), բժշկում է կոյրերին և խուլերին անդամալուծութիւնից և նոյնպէս ընդունում է կանացի հիւանդութիւններով և սիֆիլիսով տարներին։

Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան 9 ժամից մինչև 12 ժամ և երեկոյեան 7 ժամից մինչև 8 ժամ։ Ցուն Պոպովի Միքայէլեան փողոցի անկիւն № 9 և Ելիսավէտինսկայա № 2, Մատենդանատութեան մօտ, Վ.օրոնցովական կամաւորված սենեակների դիմաց։

Домъ Попова, уголъ Михайловской ул. № 9 и Елисаветинской № 2, около Интендантства, противъ Воронцовск. номеровъ. 3—10

ՍՏԱՑՎԱԾ ԵՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

(ԹԱՄԱՄՇԵՎԻ ՔԱՐՎԱՆՍԱՐԱՑՈՒՄ)

Անգլիական մահճակալներ, թամքեր, ամաններ, կարպետներ, սապոն, գրչահատներ, մկրատներ, ածիլիներ, մատուցարաններ, պատրոններ, գիլզաներ (3 ռ. հարիւրը) կլէենկա, արտաքնոցների համար թուղթ, գլխի և շորերի վրձիններ, բիսկվիտներ, թէյ, թէյամաններ, գրիչներ, մատիտներ վերանորոգիչ Մակ-Մաստէր և այլն։ 8—10

Անհրաժեշտ եմ համարում հրապարակաւ յայտնել, ի գիտութիւն ԿՈՎԿԱՍԵԱՆ *և* ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ *պատուելի* ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ, *որ դարձեալ սովորականին համեմատ ընդունում եմ յանձնարարական պայմանով վաճառելու զանազան ապրանքներ՝ նախապէս տալով և ԱՎԱՆՍ։ Նաև կատարում եմ ապրանքներ գնելու և ուղարկելու պատուէրներ։ Ցանկացողները պայմանների մասին կարող են դիմել ինձ այս հասցէով.* ОДЕССА, М. МУРАТОВУ, *իսկ Թիֆլիսում տեղեկանալ պ.պ. եղբ.* ԾՈՎԵԱՆԵԱՆՑ *և ընկ. բանկային գրասենեակում։*

Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
4—8 (Շ.)

Abonnementseinladung an
die meist verbreitete deutsche Wochenschrift:

Das Echo

(Stimmen aus allen Parteien.)

Wochenschrift für Politik, Literatur, Kunst und Wissenschaft.

Das Echo bringt allwöchentlich in unterhaltender Form Berichte über alle politischen, wirtschaftlichen, wissenschaftlichen und gesellschaftlichen Borgänge, welche sich in Deutschland und Auslande abspielen.

Das Echo ist kein Parteiblatt, sondern es läßt die interessantesten Stimmen aller Parteien zu Worte kommen.

Das Echo widmet außerdem dem Leben der hohen Kreise eingehende Aufmerksamkeit.

Das Echo bring in jeder Nummer ein bis zwei abgeschlossene Novelletten, Erzählungen u. s. w. aus der Feder bewährter, zeitgenössischer Schrifteller.

Das Echo bringt informierende Notizen, Kritiken und Leseproben aus den bedeutendsten Erscheinungen des internationalen Büchermarktes.

Das Echo betrachtet es insbesondere als seine Aufgabe, dem Leben und Treiben der Deutschen im Auslande die liebevollste Aufmerksamkeit zuzuwenden.

Das Echo will somit unsern Landsleuten im Auslande ein „Bote aus der Heimat“ sein, deshalb ist auch sein Abonnementspreis ein sehr niedriger. Es versendet die Expedition in Berlin S. W. das Echo nach allen zum Weltpostverein gehörirenden Ländern für 4 Mark 50 Pt. vierteljährlich und für 17 Mark ganzjährig, nach den Ländern und Gebieen außerhalb des Weltpostvereins für 23 Mark ganzjährig.—Zahlungen geschehen am raschesten und sichersten durch Postanweisung oder durch Anweisung auf deutsche Banken.—Ebenso liefert jede deutsche Buchhandlung und Zeitungsagentur im Auslande das Echo zu den landesüblichen Preisen. Probenummern find durch die letzteren zu beziehen oder auch direkt von

J. H. Schorer,
Verlag des Echo, Berlin S. W.

Дозволено цензурою, Тифлисъ 8 Декабря 1889 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.